Հարգելի տիկին Ղուկասյան

ԱԺ վեցերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում իմ կողմից կազմակերպվել է 59 քաղաքացիների ընդունելություն:

Հիմնականում դիմել են սոցիալ-տնտեսական, կազմակերպչական, ինչպես նաեւ պետական կառավարման հարցերով: Անշուշտ որոշ օրենսդրական նախաձեռնություններ կան եւ գտնվում են մշակման փուլում:

Ի պատասխան ձեր հարցմանը հայտնեմ, որ քաղաքացիները բարձրաձայնել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ մանկապարտեզների աշխատանքային ժամեր, պետական գերակայություն հայտարարված սեփականություն օտարելու հետ կապված փոխհատուցումներ, վիրահատական եւ ուսումնական վճարներ:

Մասնավորապես մանկապարտեզների եւ պետության կողմից դայակի վարձի փոխհատուցման հետ կապված խնդիրները պատրաստվում եմ բարձրաձայնել դեկտեմբերի 5-ի ԱԺ լիագումար նիստի կառավարական ժամի ընթացքում եւ եթե անհրաժեշտություն լինի հանդես կգամ օրենսդրական առաջարկություններով:

Որոշ նամակներ փոխանցվել են «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամ եւ միայն վերջին միջոցառման ընթացքում, որը նվիրված էր Ուսանողների միջազգային օրվան, հազարավոր ուսանողներ ստացան աջակցություն :

Էթիկայի կանոններից ելնելով հարկ չեմ համարում հրապարակել խնդրանքներն ու առաջարկները, ինչպես նաեւ լուսանկարները:

Հարգանքով՝

Ծառուկյան դաշինքի պատգամավոր

Լուիզա Սարգսյան